

48  
48

Հայ-Ռուսական համալսարանում գործող  
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին  
(հասցե՝ 0051, Հայաստանի Հանրապետություն,  
ք. Երևան, Հովսեփի Էմինի փողոց, թիվ 123)

#### ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների դոկտոր Վահե Վաղինակի  
Հովհաննիսյանի ԺԲ.00.04 «Դատական իրավունք. Դատարանակազմություն, քաղաքացիական  
դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն,  
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-  
հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ Լուսինե Վոլոդյայի  
Սարգսյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման՝ «Հայցի ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարության  
իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է հայցի ապահովման ինստիտուտի իրավական  
կարգավորմանը: Այս իրավական ինստիտուտի կիրառման հարցերը քաղաքացիական  
դատավարությունում մշտապես արդիական են, քանի որ հայցի ապահովումն ուղղված է  
ողջամիտ ժամկետում քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտի  
կատարումն ապահովելուն: Դատական ակտերի կատարումը դատական պաշտպանության  
արդյունավետ միջոցներից է, որի կարևորությունը բխում է նաև Մարդու իրավունքների  
եվրոպական դատարանի պրակտիկայից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր  
դիրքորոշումներում նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը կլինեք անիրական, իսկ  
դատական պաշտպանության ընթացակարգը՝ անարդյունավետ, եթե ներպետական  
օրենսդրությունը թույլ տար վերջնական և պարտադիր բնույթի դատական ակտերը մնային  
չկատարված՝ ի վնաս մյուս կողմի: Եթե պետությունը չի երաշխավորում վերջնական դատական  
ակտերի կատարումը դա հանգեցնում է այնպիսի իրողության, ինչն անհամատեղելի է

իրավունքի գերակայության սկզբունքին, որը պայմանավորվող պետությունները պարտավոր են պահպանել Կոնվենցիան երաշխավորելիս: Ընդ որում, ըստ Եվրոպական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը ներառում է ոչ միայն գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու, այլև կայացված դատական ակտը կատարելուն ուղղված գործուն և արդյունավետ կառուցակարգեր կիրառելու անհրաժեշտություն:

Հայաստանի Հանրապետությունը իրավական համակարգ է ներդրել Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորված կոնվենցիոն սկզբունքների մեկնաբանությունների հիման վրա իրավունքների պաշտպանության ներպետական այնպիսի միջոցներ կամ դրանց համադրման արդյունավետ կառուցակարգեր, որոնք ուղղված են դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների տարրերի լիարժեք իրացմանը: Այդպիսի կառուցակարգերից է հայցի ապահովումը, որը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել գործին մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Հեղինակը ընտրված թեմայի վերաբերյալ կատարել է հետաքրքիր, համապարփակ հետազոտություն: Հետազոտությունն իրականացնելիս ուսումնասիրվել է մեծածավալ գրականություն, այդ թվում՝ արտասահմանյան, բերվել են ուշագրավ տվյալներ: Հեղինակը տեսական գրականության և իրավական ակտերի վերլուծության հիման վրա վեր է հանել հայցի ապահովման ինստիտուտին վերաբերող բազմաթիվ հիմնահարցեր և առաջարկել դրանց լուծումները:

Աշխատանքում առկա են բազմաթիվ արժեքավոր հետևություններ, մտահանգումներ և տեղեկություններ:

Մասնավորապես, պարագրաֆ 1.1.-ում հեղինակը ուսումնասիրում է հայցի ապահովման ինստիտուտի կարգավորումը և նշանակությունը դատավարագիտության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մեջ: Այստեղ ներկայացված են հայցի ապահովման հասկացությունը, առարկան, նպատակները և առանձնահատկությունները: Նույն

պարագրաֆում քննարկվել են հայցի ապահովման կիրառման հնարավորության հարցերը դատավարության տարբեր վարույթների շրջանակներում:

Պարագրաֆ 1.2.-ում հեղինակը ներկայացնում է հայցի ապահովման ինստիտուտի զարգացման պատմությունը: Ի թիվս այլնի նկարագրվում է նաև այս դատավարական ինստիտուտի առաջացումը և զարգացման պատմությունը հայ իրավունքում: Կատարված ուսումնասիրության արդյունքում, հեղինակը արձանագրել է, որ հայցի ապահովման ինստիտուտը, ուղղված լինելով եզրափակիչ դատական ակտի կատարումն ապահովելուն, սկիզբ է առել դեռևս հռոմեական իրավունքից, հետզհետե այս ինստիտուտի զարգացման արդյունքում արդեն 18-րդ դարում սկսել են կիրառվել ներկայիս հայցի ապահովման միջոցների նախատիպերը՝ արգելանք, գույքի հրապարակային վաճառքի կասեցում և այլն:

Պարագրաֆ 2.1.-ում հեղինակը ներկայացնում է հայցի ապահովման կիրառման նախապայմանները և իրավական հիմքերը: Այս պարագրաֆում հեղինակը անդրադառնում է նաև հայցի ապահովման քաղաքացիադատավարական կառուցակարգի սուբյեկտային շրջանակը որոշելու հիմնախնդրին:

Պարագրաֆ 2.2.-ում հեղինակը անդրադառնում է հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու, ինչպես նաև վերացնելու հարցերին: Նշվում է, որ հայցի ապահովման մեկ միջոցի փոխարինումը մյուսով դատական նիստի շրջանակներում քննարկելը նպատակահարմար է միայն այն դեպքում, երբ այդպիսի դիմում է ներկայացրել այն անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոցը:

Պարագրաֆ 2.3.-ում ներկայացվում է հակընդդեմ ապահովման և հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման հարցերը: Այստեղ հեղինակը անդրադարձել է հակընդդեմ ապահովման չափ սահմանելու չափորոշիչներին և առաջարկել է հարցին տալ օրենսդրական լուծում: Հեղինակը նաև մանրամասն ներկայացնում է հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման հարց ներկայացնելու իրավական կարգավորումները:

Պարագրաֆ 2.4.-ում ներկայացվում են ՀՀ քաղաքացիական դատավարության համար նոր հասկացություն հանդիսացող հայցի նախնական ապահովման միջոցները: Այստեղ հեղինակը տալիս է հայցի նախնական ապահովման միջոցների սահմանումը, ներկայացնում է դրանց առանձնահատկությունները, վերլուծում է հայցի նախնական ապահովման միջոցների

առաջացման պատմությունը, ինչպես նաև օրենսդրական կարգավորումները տարբեր պետություններում: Ուսումնասիրելով հայցի նախնական ապահովման կիրառման մասին միջնորդության բովանդակության օրենսդրական պահանջները, հեղինակը գտել է, որ դրանք թերի են և առաջարկել է հարցը կարգավորող հոդվածը լրացնել նոր պահանջներով:

Պարագրաֆ 2.5.-ում ներկայացված է հայցի ապահովման հետ կապված որոշումների բողոքարկման և կատարման հիմնահարցերը: Այստեղ հեղինակը ներկայացնում է հայցի ապահովման հետ կապված այն որոշումները, որոնք ըստ գործող օրենսդրության, ենթակա են բողոքարկման և առաջարկում է այդ որոշումների թվին ավելացնել նաև հայցի ապահովման միջոցների վերացման մերժման, հակընդդեմ ապահովում կիրառելու, ինչպես նաև հայցի ապահովման մեկ միջոցի փոխարինումը մեկ այլ միջոցով թույլատրվող կամ մերժող դատարանի որոշումները:

Պարագրաֆ 3.1.-ում հեղինակը նկարագրում է հայցի ապահովման միջոցների տեսակները ՀՀ քաղաքացիական դատավարությունում: Ներկայացվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով սահմանված հայցի ապահովման միջոցները: Իրավացիորեն նշվում է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հայցի ապահովման միջոցները, ըստ էության, նույնական են և խելամիտ կլինի դրանք միացնել մեկ կետում և այն սահմանել որպես պատասխանողին կամ այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը:

Պարագրաֆ 3.2.-ում հեղինակը անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով նախատեսված հայցի ապահովման միջոցներին՝ պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելուն և հայցվորին պատկանող պատասխանողի մոտ գտնվող գույքի վրա արգելանք դնելուն: Նկարագրվում են արգելանքի՝ որպես հայցի ապահովման միջոցի հասկացությունը, արգելանքի առանձին տարրերը՝ գույքագրումը, գույքի օգտագործման իրավունքի սահմանափակումը, գույքն առգրավելը և ի պահ հանձնելը:

Պարագրաֆ 3.3. նկարագրվում են պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել արգելել և պարտավորեցնելը որպես հայցի ապահովման միջոցներ:

Աշխատանքի ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ հեղինակը կատարել է ավարտուն աշխատանք՝ կիրառելով ճիշտ մեթոդաբանություն, օգտագործելով տեսական, պրակտիկ լայնածավալ նյութեր: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի կողմից հրապարակված յոթ գիտական հոդվածներում: Մեղմագիրը արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացված աշխատանքին:

Այնուամենայնիվ, կարծում եմ, որ ատենախոսության շրջանակներում հեղինակի կողմից արվել են առանձին վիճելի, իսկ որոշ դեպքերում էլ՝ ոչ ճիշտ եզրահանգումներ, որոնք տեղ են գտել նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում: Մասնավորապես.

1. Հեղինակը առաջարկում է տալ հայցի ապահովման հասկացության օրենսդրական սահմանում և շարադրել հասկացությունը կարգավորող հոդվածն այսպես. «Հայցի ապահովումը գործին մասնակցող անձի կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի նախաձեռնությամբ կիրառվող օրենքով նախատեսված դատավարական միջոց կամ միջոցների համակցություն է, որի նպատակն է ապահովել գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտի կատարումը»: Անհրաժեշտ եմ համարում նշել, որ տվյալ սահմանումը թերի է և ամբողջությամբ չի արտացոլում հայցի ապահովման բնույթը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայցի ապահովման միջոցները կիրառվում են ոչ միայն գործով կայացվող եզրափակիչ դատական ակտի կատարումն ապահովելու նպատակով, այլ նաև այն դեպքերում, երբ նման միջոցներ չկիրառելը կարող է հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին: Ընդ որում, հետազոտությունն ավելի շահեկան կլիներ, եթե ատենախոսության մեջ հեղինակն առավել համակողմանիորեն բացահայտեր հայցի ապահովման էությունն ու իրավաբանական բնույթը՝ այն դիտարկելով իրավունքների պաշտպանության միջանկյալ միջոցների կիրառման շրջանակներում:

2. Պարագրաֆ 1.2.-ում հեղինակը նշում է, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքով (125-131-րդ հոդվածներ «Գրավ և ինչքի իրավունք») նախատեսված գրավը, ըստ էության, իրենից ներկայացնում է իրավական առումով, մոտավորապես հայցի ապահովման միջոցներից կիրառվող արգելանքի դատավարական հասկացությունը, քանի որ գրավ՝ պարտավորության դիմաց, անձը կարող էր վերցնել միմիայն դատարանի որոշմամբ, ինչով և ապահովում էր իր պարտավորության, ինչպես նաև վերջնական դատական որոշման կատարումը: Գտնում եմ, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի <<Գրավ և ինչքի իրավունք>> կարգավորող հոդվածները վերաբերում են գրավի իրավունքին որպես պարտավորությունների ապահովման միջոցի, այլ ոչ թե հանդիսանում են դատավարական միջոց, ուղղված վերջնական դատական ակտի կատարման երաշխավորմանը: Այն չի կարելի դիտարկել որպես հայցի ապահովում՝ արգելանք գույքի նկատմամբ, քանի դեռ չկա հայց՝ վիճելի իրավահարաբերություններից բխող, իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի վրա հիմնված պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջ, որը բավարարել կամ մերժելու վերաբերյալ դատարանը պետք է որոշում կայացնի: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ արգելանքը դատարանի որոշմամբ ձեռնարկվող հայցի ապահովման միջոց է, որն ընդհանրապես բացառում է գույքի սեփականատիրոջ կողմից սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող որոշ իրավագործությունների, օրինակ՝ գույքն օտարելու միջոցով տնօրինելու իրավագործության իրականացումը: Մինչդեռ, գրավի պարագայում գրավառուի համաձայնությամբ սեփականատիրոջ կողմից գույքն օտարելու հնարավորությունը մենք բացառել չենք կարող:

3. Էջ 84-ում հեղինակն առաջարկում է հայցի ապահովման միջոցների կիրառումը նախատեսել դատավարության ցանկացած փուլում: Կարծում եմ, հեղինակի կողմից նման անվերապահ պնդումն այդքան էլ արդարացված չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Վերաքննիչ և վճռաբեկ վարույթների նպատակն է ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը, ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ վճռաբեկ աստիճան էլ կաշկանդված է իր առջև դրված՝ օրենքի և այլ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու սահմանադրաիրավական խնդիրների իրացմամբ: Հեղինակի առաջարկության արդյունքում

պետք է վերանայել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունը, որն ամբողջապես հիմնված է, այսպես կոչված, «մեղավորության կանխավարկածի» վրա, երբ դատավարական գործողություններ կատարելու կամ չկատարելու բացասական հետևանքների ռիսկն ընկնում է գործին մասնակցող անձանց՝ հիմնականում կողմերի վրա: ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական և Վճռաբեկ դատարանները սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արդարադատության գործառույթն իրականացնում են ոչ թե գործն ըստ էության քննելու, այլ ստորադաս դատարանի դատական ակտերը վերանայելու միջոցով: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ կողմն առաջին ատյանի դատարանում հայցի ապահովման միջնորդություն չի ներկայացրել, ապա վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններում նման միջնորդությամբ հանդես գալու հնարավորությունը դուրս է դատական ակտերը վերանայող այս ատյանների գործառութային տրամաբանությունից այն պարզ պատճառով, որ բացակայում է գործին մասնակցող անձի միջնորդության քննության արդյունքում կայացված դատական ակտը կամ դատարանի կողմից դրսևորված վարքագիծը: Այդպիսի հնարավորությունը չի կարող կրել անվերապահ բնույթ, այլ առնվազն պետք է սահմանափակված լինի ստորադաս դատական ատյանում նման միջնորդությամբ հաղես չգալը հիմնավորելու հանգամանքով կամ վերադաս դատական ատյանում հայցի ապահովում կիրառելու անհրաժեշտության համար իրավաչափության այլ պայմաններով: Մինչդեռ, ատենախոսության շրջանակներում հեղինակը բավարար խորությամբ չի վերլուծել և ներկայացրել նման իրավակարգավորման տրամաբանությունը:

4. Վերլուծելով հայցի ապահովման քաղաքացիադատավարական կառուցակարգի սուբյեկտային շրջանակը, հեղինակը գալիս է եզրակացության, որ հայցի ապահովման միջնորդությամբ կարող են հանդես գալ ինքուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք: Պաշտպանության ներկայացվող այս դրույթը հեղինակի կողմից որևէ կերպ հիմնավորված չէ: Բացակայում է հայցվորի կամ պատասխանողի կողմում հանդես եկող ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց կողմից նման միջնորդությամբ հանդես գալու հնարավորություն սահմանելու վերլուծությունը: Տվյալ եզրակացությունը հեղինակի կողմից ամրապնդված չէ նաև կոնկրետ օրինակներով դատական պրակտիկայից:

Բացի այդ, այս հարցի շրջանակներում հեղինակն անպայմանորեն պետք է ուսումնասիրության առարկա դարձնեք դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ հայցի ապահովման միջոց կիրառելու հնարավորության սահմանափակման հետևանքները: Մասնավորապես, Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում դատական ակտի արդյունավետ և ողջամիտ ժամկետներում կատարումը դիտարկվում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրավարժանդակային տարողունակության սահմաններում, որպիսին ապահովելու առաջնային պարտականություն կրող սուբյեկտը պետությունն է՝ ի դեմս դատարանի: Հետևաբար, հեղինակն առնվազն պետք է ուշադրության արժանացնեք դատարանի կողմից՝ դատական ակտի արդյունավետ և ողջամիտ ժամկետներում կատարման համար պայմաններ ապահովելու միջոցով արդար դատաքննության իրավունքի լիարժեք իրացման հետ կապված հիմնահարցերը: Ընդ որում, ճիշտ կլինեք, որ ատենախոսը դատարանի նախաձեռնությամբ կիրառված հայցի ապահովման արդյունքում գործին մասնակցող անձին պատճառված վնասների հատուցման ռիսկը ևս դիտարկելը «մեղավորության կանխավարկածի» սահմաններում: Այսպես, անհիմն հայց ներկայացնելու միջոցով վարույթ նախաձեռնող կողմը տրամաբանական է, որ կրի նաև դատարանի նախաձեռնությամբ կիրառված հայցի ապահովմամբ պատճառված վնասները հատուցելու ռիսկը, եթե վարույթի ընթացքում որևէ վարքագիծ չի դրսևորել կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու ուղղությամբ:

5. Պարագրաֆ 2.3 ում հեղինակը առաջարկում է հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավունք նախատեսել նույնիսկ այն դեպքում, երբ հայցը բավարարվել է, սակայն դատավարության ընթացքում հայցի ապահովման կիրառումը եղել է անհիմն: Ուստի առաջարկել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավական հիմքերը լրացնել նաև այն հիմքով, երբ հայցի ապահովման միջոցը վերացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով: Կարծում եմ, օրենսդրական այսպիսի փոփոխությունը իմաստազուրկ է, քանի որ օրենսդիրը նման դեպքերի համար նախատեսել է այլ դատավարական միջոց՝ հակընդդեմ ապահովումը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը նախատեսել է, որ գործին մասնակցող անձը, որի դեմ կիրառվել



56

է հայցի ապահովման միջոց, կարող է միջնորդություն ներկայացնել իր հնարավոր վնասների հատուցման համար հայցի ապահովման միջնորդություն ներկայացրած գործին մասնակցող անձից ապահովում (հակընդդեմ ապահովում) պահանջելու վերաբերյալ: Այսինքն, հնարավոր վնասների առկայության պարագայում օրենսդիրն արդեն իսկ գործին մասնակցող անձին ընձեռել է իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքով, որը չիրականացնելու բացասական հետևանքների ռիսկը պետք է վերջինս կրի ինքնուրույն:

Վերը նշված դիտողություններն, այնուամենայնիվ, կրում են բանավիճային բնույթ, որոնց քննարկումները տեսության մեջ դեռ վստահաբար կշարունակվեն, էական չեն և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Լուսինե Վոլոդյայի Սարգսյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Հայցի ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» կետ 7-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.04 «Դատական իրավունք. դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:


ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԵՄԱՆՈՍ՝

Վ.Վ.Հովհաննիսյան  
Պրոֆեսոր, ի.գ.դ.  
16.05.2023թ.

85

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Վահե Վաղինակի Հովհաննիսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
դեկանի տեղակալ, իրավ. գիտ. դոկտոր.  
պրոֆեսոր՝



Հ.Մ. Խաչիկյան